ՓԱՐԻԶ

ԼՐԱԳԻՐ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԵՒ ՊԱՅՄԱՆՔ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Այս լրագիրն երկու լեզուաբար եւ անդամ ամբողջ տարին հրատարակվի։

Տարեկան գինն է Փարիզի համար . . . . . ֆր. 20
Տաճկաստանի . . . . . » 24
Անգլիայ, Աւստրիական եւ Պարսկաստանի » 25
Աւստրալիայ եւ Եգիպտոսի . . . . . » 26
Ռուսաստանի եւ Մոլդաւ-Վլաշիայ . . . . » 28
Գերմանիայի, Հնդկաստանի եւ Ճավայի . . . » 30

Իւրաքանչիւր թերթն առանձին՝ մէկ ֆրանկ։

Պարբերականները փարիզեցիներն օրն եւ ամիսը մէկ անգամ է լոնդրէ (ֆրանսերէն) լեզուն։

Լրագրոյս վերաբերեալ հարցերն եւ գրութիւնները այս օրինակ հասցեն երթան։

M. A. Mourad, rue du Dragon, 26, à Paris.

Եւ անոնց փոխարէն նամակը պէտք է վճարեալ լինի։

ԱՆՈՒԱՆՔ

ԱՐԳՈՅ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ

Կոստանդնուպոլիս, Պ. Եղուարդ Մուրատեան։
Անդրիանուպոլիս, Տ. Մելքոն Բիւրնիկեան։
Զմիւռնիա, Տ. Սարգիս Մ. Ճշմարտաբերեան։
Բերիա (Հալեպ), Տ. Յ. Ս. Քիւրտիկեանոֆ։
Նիկոմիդիա, Պ. Տիգրան Մուրատեան։
Թոքատ, Տ. Թադեւոս Ցիւլիսեան։
Էրզրում, Տ. Ա. Յակոբ Յովսեփեան։
Տրապիզոն, Տ. Պօղոս Կիւրճեան։
Եւ (Մօլդաւիա), Տ. Յակոբ Պէյսէլեան։
Վիեննա, Տ. Ն. Կ. Մարգարեան։
Թիֆլիս, Տ. Մարգար Թանդիլեան։
Մանչեսթր, Տ. Գասպար Յ. Յովհաննէսեան։
Ադրիանոպոլ, Տ. Ս. Մ. Մինասեան։
Պաղեստին եւ Ճաֆա, Տ. Գ. Նահապետեան։
Կալկաթա, Տ. Յովհաննէս Ալքալեան։

ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ. — ԹԻՒ 64 | 1862 | 28 ՄԱՐՏ

ՔԱՂՈՒԱԾ

Փարիզ, 27 Մարտ 1862։

Ազգային Սահմանադրութեան վերատին սկզբնաւորութեանը վերայ սկսաւ տեղեկութիւններ կարդացուիլ թէ հայ եւ թէ եւրոպական լրագրաց մէջ։ Ահաւասիկ անոր վերայ Մարսիլիոյ Սէմաֆորին Պօլսոյ թղթակցին մարտ 12 թուով տուած տեղեկութիւնները։

«Հոյ հասարակութիւնը որ քանի մը տարի յառաջ սատկապէս երկու մասի բաժնուած էր, եւ մին տեսակ մը սահմանադրութեան պէս կանոնադրութիւն մի կուզէր, իսկ միւսը ոտտրիարքին բոլորտիքն առած՝ իրաց նախնի վիճակը կը պաշտպանէր, վերջապէս այն կանոնադրութեան տիրանալոյ վրայ է։ Այն խառնութիւններն յետոյ, որ ժամանակին պատճառած եմ ձեզ եւ որմէ հետեւեցաւ պատրիարքին հրաժարիլը, Բ. Դրան հաստատած յանձնաժողովն իր աշխատութիւնը լրացոյց։ Իւր պատրաստած կանոնադրութիւնը ժողովրդեան ընտրած անդամներովը կազմած մասնաժողովոյ մը կը յանձնուի, որոյ պաշտօնն է քննել թէ գործադրելի է այն, եթէ չափաւորութեան մը կարօտ է։ Բ. Դուռն իւր հպատակ ժողովրդոյ իրաւունքը յարգելով և թոյլատուութեան փարձ տալով միշտ նախանձախնդիր դոլով՝ անոնց գործոյը մէջ կը մտնէ միայն անոր համար՝ որ իրենց յանձնաժողովոյ՝ մասնաժողովոյ հարկ եղած իշխանութիւնը տայ՝ իրենց կրօնակիցներէն ընդունած պաշտօնին կատարելոյ համար. և անոնց գործելոյ կատարեալ ազատութիւն կը շնորհէ։»

19 թուով գրած նամակին մէջ ալ այսպէս կը կարդանք։

«Յանձնաժողովն Հոյ հասարակութեան սահմանադրիչ կանոնադրութիւնը լրմնցընելով և մասնաժողով մի զանի քննելով՝ այս օրերս Բ. Դրան պիտի ներկայացուի։ Պատրիարքին հրաժարելէն ի վեր Հայ հասարակութեան անհաստատ վիճակը մտերս կը դադրի. և նոր կանոնադրութեան գործադրութիւնը, որ ազատական մասին ջանից և Բ. Դրան անաչառութեան և թոյլատուութեան ոգւոյն արդիւնքն է, մեծ անհամբերութեամբ կսպասուի նոյն հասարակութենէն, որ քանի մը տարիներէ ի վեր ամենագովելի եռանդով յառաջադիմութեան և կրթութեան ոլորտային մէջ մտած է։»

Իսկ Մասիսը կը հաստատէ թէ, «Կայսերական բարեհամբաւ կառավարութեան հրամանին համեմատ, երեքշաբթի օրը՝ փետրուար 20՝ ազգային երեսփոխանաց և եկեղեցական անդամակցաց ընդհանուր ժողով գումարուեցաւ Պատրիարքարանը, և Բ. Դրան կազմած յանձնաժողովն պատրաստեալ սահմանադրութեան քննութեանը համար ուղղած եօթն անձանց ընտրութիւնը կատարուեցաւ։»

Ահաւասիկ այն անձանց անունքը.

Այրանեան Յոհան պէյ	92 քուէ։
Մինասեան Մինաս էֆէնտի	88 »
Սաղթեան Մկրտիչ աղա	82 »
Օտեան Գրիգոր էֆէնտի	79 »
Ռուսինեան Նահապետ էֆէնտի	76 »
Սուրէնեան Յոհաննէս աղա	71 »
Մանուկեան Մ. Մանուկ աղա	60 »

Հետզհետէ ընդունած տեղեկութիւններս մեր Ազգայ Ընթերցողաց հաղորդել կը ջանամք։

Անցեալները Վան պատահած սոսկալի կամ անսոյգ խառնութեան լուրը, ինչպէս Եւրոպայ տարածեցաւ, և մեր լրագրոյս 62 թուոյն մէջ յիշատակեցինք, նոյնպէս Ամերիկայ ալ հասնելով՝ անոր վերայ Նոր-Եօրքի Իվենինգ-Փոսթ անուն լրագիրը հետագայ խորհրդածութիւնն ըներ է. զոր մերազնեայց հաղորդելոյ անարժան չենք համարիր։

«Երեկ Ասիական անուն շրջենաւուն բերած լուրը, թէ Վանի Հայերը ոսոր եղած են Տաճկաց դէմ, լի է քաղաքական նշանակութեամբ։

» Վանը Ասիական Տաճկաստանի մէջ տեղն է, և առենօք Հայաստանի մայրաքաղաքն էր։ Ասիկայ նոյն անուամբ ընդարձակ լճի մը եզերքը զետեղեալ, և շինեալ է ի Շամիրամէ ի պատիւ Ասրայի, գեղեցիկ մակնուանեալ Հայոց թագաւորին, որուն հետ նա սիրահարեալ էր։

» Տեղւոյն բնական պատսպարութեանը նայելով ճանապարհորդք մտերս զանի Հայաստանի Ակվանթօրէն անուանած են։ Այս տեղւոյն բնակիչները քաջակորով կազմուածք մը ունին և նշանաւոր խելամտութիւն։ Նաև ասոնք ուղղակի սերունդն են այն քաջամարտիկ անձանց որք շատ անգամ Հռովմայեցւոց յարձակմանցը դէմ դրած էին։ Այլ սակայն՝ ասոնց երկիրը չորեքտասանեորդ դարուն մէջ Թիւրքմէններուն խուռն բազմութեամբը կոտորելոյն յաջողակեցաւ, և իրենք ալ մինչև յարդ բոլորովին նուաճեալ մնացին։

» Ասոնք ինչպէս որ բարերաղդութեան մէջ արի և քաջասիրտ էին, նոյնպէս ալ դժբաղդութեան մէջ ինքզինքնին առաքինի ցուցած են. քանզի Տաճկաց ամէն կերպ բռնաւորութիւնն ու հարստահարութիւնը նշանաւոր քաջութեամբ մինչ մտերս կրած են։ Բայց այժմ մէկէն ի մէկ ոտք ելնելով՝ միտքերնին դրեր են որ իրենց հարկապահանջներուն բռնաբարութեանցը դէմ դնեն, մինչև նախատոնաց անդամ ալ չհամբերեն։ Այս ալ անանկ ժամանակի մը մէջ, որ ապստամբութիւնն ապըստամբութեան վրայ երկրին ամէն կողմը պակիլ ու տարածուելոյ վերայ է, և տէրութեան զանձն ալ բոլորովին ապառած։ Վանայ Հայոց այս նոր և անակնկալ ոտք ելնելը կը ցուցանէ թէ ասիկայ հետևանքն է ազդեցութեան մը որ տէրութեան կործանումն աչքն է առած։»

Այս յօդուածոյն Իվենինգ-Փոսթի մէջ երևիլն ազդեցնուս պատիւ մը կրնայ համարուիլ. քանզի, թէև անոր տպագրութիւնը՝ գնոյն սղութեանը պատճառաւ՝ Հէրալտին կամ ուրիշ լրագրաց պէս բազմաթիւ չէ, բայց, ըստ մեր ընդունած ծանօթութեան, կրնամք ըսել թէ ամենապատուաւորն է։ Այս լրագրոյն տնօրէնն և խմբագիրը երևելի Վիլիամ Գրէյն Պրայանդ անուն Ամերիկայի հռչակաւոր պուէտն ըլլալով՝ հասարակութեան մէջ ամէն տեղ մեծ համբաւում ունի, և անոր շրջաբերութիւնը հարկաւ վեր աստիճան մարդոց մէջ է։ Ուստի, առանց անոր քաղաքականութեան դրութեանը համախոհ լինելոյ, մեզի սա կը թուի թէ, անոր մեր ազգին վրայ ասանկ համարում մի ունենալը ոչ սակաւ փառք և պատիւ է, մանաւանդ երբ միսիոնարաց անդադար գրգռութիւնները և տարածած վատ համբաւները միտք բերենք։ Այդարև ուրախ եմք համարելով թէ, Հէրալտին ըսածին պէս, միսիոնարք չեն եղեր որ Ամերիկայիք կը ներկայացընեն։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Յեռ լրագրոյս նախընթաց թիւը։)

Այս մտաւորական շարժման նայելով, որ կը տարածի ամեն կողմ՝ որ որ հնդկա-գերմանիկ գերդասանին այս ժառանգութենէ զուրկ անդամները խմբովին կը գտնուին, գիտես թէ հայկական գրականութիւնն այժմեան քաղաքակիրթ ազգաց լեզուներուն մէջ իւր հին ծագմանն արժանի կարգը մտնել կուզէ։ Այլ այս գեղեցիկ գրականութիւն, որ քիչ քննուած է և կարի արժանի քննութեան, անժխտելի իրաւունք ունի զիտնոց ուշադրութիւնը գրաւելոյ։

Հայոց լեզուն մայր լեզու մի է, և Հայք մինչև Նոյ կը հասցընեն անոր սկիզբը։ Արևելեան լեզուաց մէջ մի միայն անիկայ է որ ձախէն յաջ կը կարդացուի, ինչպէս գաղղիերէնն ու բոլոր եւրոպական լեզուները։ Այդ լեզուն կը վերաբերի կովկասեան լեզուաց կարգին՝ որ ասիական լեզուաց եօթն կարգերուն երկրորդն է, բայց ամենևին հիմնական կապակցութիւն չունի անոնց հետ։ Այլ բազմաթիւ արմատներ ունի հնդկա-գերմանական լեզուէն և քանի մը մասամբ կը մատնեցոյց Սիսերիոյ Ցիկենի կամ Ցիկեսա անուանեալ ժողովրդոյ լեզուին և հիւսիսային Ասիոյ ուրիշ լեզուաց։ Իւր այբուբենը, որ 406 թիւէն ի վեր անփոփոխ մնացած է, 38 տառէ կը բաղկանայ՝ 30ը բաղաձայն և 8 ձայնաւոր. զրերն երկու տեսակ են, դլխագիր կամ երկաթագիր, որ մինչև մեռասաներորդ դարը միայն անիկայ կը գործածուէր. և մանր գիր, որուն գործածութիւնն այնուհետև սկսաւ, և որ առջիններէն շատ կը տարբերի։ Հայերէն լեզուն շատ հարուստ է ասայուածոց կողմէն, պայման չունի, և տասն կերպ փոփոխելով կը հոլովին անունները. մէկ յօդ ունի, բայց այդ յօդը բառերուն վերջը կը դրուի, ինչպէս հիւսիսային Եւրոպիոյ գաւառական լեզուներուն մէջ։ Բուն հայերէն լեզուն, որ է հին լեզուն կամ դրաբարը, այժմ չխօսուիր. միայն հին գրեանց և ընտիր հեղինակութեանց մէջ կը գտնուի. իւր քերականութիւնը և բանից կազմութիւնը որ յոնականին կը նմանի, հասկընալոյ համար Հայերն անդամ ստիպեալ են նախ ուսանիլ։ Յունաց, Աբրահամեանց և Պարսից մերձաւորութեան, յարաբերութեանց և Հայոց վերայ տիրելնոյն առթիւը՝ հայերէնին մէջ շատ բառեր մտան անոնցմէ. բայց հարկ է ըսել թէ այն օտար բառերը բնաւ ազդեցութիւն չբերին լեզուին ոգւոյն վերայ. և իրը օտար բնակիչ մնացին միշտ։ Նոր կամ աշխարհաբառ հայերէնը որ ազգին անկման արդիւնքն է, չորրորդէն մինչև երկոտասաներորդ դարը խօսուած ու գրուած հայերէնէն շատ կը տարբերի անշուշտ, ոչ թէ միայն քերականութեան և խօսքի կազմութեան կողմանէ, այլև բառից նոր մտքերովը որ խմաստներու խոտորումն կը զատնուն. հին հայերէնը հակիրճ և անբաւ պէս պէս ոճեր ունի, իսկ այժմեանը տասկերէնի պէս երկայն պարբ-

բերութեանց մէջ կրծվոյ։ Բայց սա աղէկութիւնը կայ, որ այժմ առաջին լեզուին յատակութեանը դառնալոյ մեծ ջանք մը կըտիրէ։ Այս մասին տրուած առաջին թեւագրումն իրաւամբ կըվերարերի այն Հայ վարդապետաց աշխատութեանցը, որք 1717ին Վենետիկ հաստատուեցան Մխիթարեան անուամբ, և Ս. Ղազարու կղզւոյն միջի իրենց վանքը Հայոց ազգին զիտական և ուսումնական ծանօթութեանց գլխաւոր կեդրոնն ըրին. և իրենց ազնիւ ձեռնարկութեանն այսօր խաղաղ հետսմուտ եղած են ազգին զանազան կողմանց զիտականները։

Բաւական կըհամարինք այս քանի մը տեղեկութիւնները որ դեռ կրնայինք ընդարձակել։ Այսչափը բաւական է անշուշտ հայկական մտաց Արևմտեան քաղաքակրթութեան ստորճանին հասնելոյ համար ունեցած ազնիւ տրամադրութեանցը վերայ գաղափար մի տալոյ։ Այս նշանաւոր վիճումն եթէ ընդհանուր տեսութեամբ անգամ նկատէինք, դարձեալ մեզի կըվերարերէր զայն խրախուսել։ Եւս առաւել պարտիմք ուրախանալ հայկական այժմեան սերունդին ջանիցը վերայ, երբ կրտեսնենք անոր անդամներէն ոմանց, այն նպատակին համար, մեր լեզուին ուսումն ի կիր արկանելը՝ բառարաններով և դրադիտական գործոց թարգմանութեամբը։ Այսով թէ իրենց ազնիւ նպատակին կրծառայեն որուն նուիրած են ինքզինքնին, և թէ Արևելքի մէջ Գաղղիոյ ազդեցութիւնն աւելցընելոյ։

Ինքզինքնին այս կրկին աշխատութեանց նուիրող Հայոց մէջ հանութեամբ կըյիշատակենք վերոյիշեալ երկու հրատարակութեանց հեղինակը։ Տ. Ամբրոսիոս Գալֆիայեան արդէն ինքզինքը ծանօթացուցած է դրականական և լեզուագիտական հայերէն երկասիրութիւններովը, որոց բոլորին ալ վարձանն է և բոլորական քաղաքակրթութիւնը Հայաստանի ծանօթացընել. Արևելքի մէջ Գաղղիոյ լեզուն, գաղափարներն ու երևելի հեղինակութիւնները տարածել և անոնց յարգը ճանչցընել. նոյնպէս գաղղիայի արևելագիտաց դիւրացընել արևելեան լեզուաց ուսումը։ Այս երկասիրութեանց մեծագոյն մասը Փարիզ հրատարակեցան. միայն վեց հատը Վենետիկ ու Թէոդոսիա։ Այս վերջիններէն, որ մեզ ծանօթ են, կըյիշենք. Ընդհանուր Պատմութիւն մը հինգ հատոր ութածալ. Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի պատկերազարդ երկու հատոր. Ընդարձակ Թուագանութիւն մը և Աշխարհագրութիւն մը հայ դպրոցաց համար։ Իսկ Փարիզ ըրած հրատարակութիւնքն աւելի բազմաթիւ են, և մեր բաւական կըհամարիմք միայն հետևեալներն յիշելը. Հոյլիական Գիտագրութիւն մը, որուն մէջ հայկական տառից ձևերը վայելչացուցած է ըստ եւրոպական տառից, և որ պատուով յիշատակեցաւ 1855ի Համաշխարհական Արուեստահանդիսին մէջ. Առաջնորդ գրուցատրութեան Գաղղիերէն-Ցամկերէն. ուրիշ մը Գաղղիերէն-Հայերէն, հայերէն գրերով գաղղիերէն հնչումն ալ գրուած. Գաղղիերէն-Ցամկերէն Բառարան մի, որմէ 3000 օրինակէն աւելի ծախուեցաւ երկու տարուան մէջ. Պօղ և Վիրգինեայ հայերէն թարգմանութիւնը, գաղղիերէն բնագրոյն հանդերձ տպեալ։ Բոլոր այս երկասիրութիւնքը, ինչպէս յայտնի է, կըծանուցանէին թէ հեղինակն ատենով չպիտի վերջացընէր իր աշխատութիւնը։

Իրօք, այսօր Տ. Ամբրոսիոս Գալֆիայեան կը յաւելու երկու գիրք ալ իւր արդէն հրատարակածներուն կարգը, որոց համար իւր հայրենակիցներն ու մեք պարտիմք իրեն։ Այս գրքերուն մէկն է, երկար աշխատութեան կարօտ և դժուարութեամբ լի գործ մը, որ յաջողութեամբ գլուխ ելու, Հայ-Գաղղիերէն Բառգիրք մը, որուն մէջ հաւաքուած են բոլոր ընդհանրական ասացուածները, և որ հնախօսներուն և արևելագէտներուն պէտք եղած գրեանց կարգին մէկ պակասը կըլեցընէ։ Միւսը Ցենդրոնի Ցեղմապայ Արկածից հայերէն թարգմանութեան մէկ դեղեցիկ տպագրութիւնն է մեծ ութածալ, որ նշանաւոր է թարգմանութեան արժանաւորութեամբը, տպագրութեան գեղեցկութեամբը և պատկերաց բազմութեամբը։ Այս գիրքը, նուիրեալ առ պատուաւոր հայ Տիկին Ռոզա Ինկիլիզ Բարովղեան՝ որ Փարիզու զանազան վարժարանաց մէջ ուսանող իւր ուստերաց և դստերաց կրթութեանը կըհսկէ, հեղինակին կողմանէ ազնիւ երախտագիտութեան նուէր մըն է, որ մեզի թոյլ կը տրուի հռչակել, և որ մեր աչքին, արժանապէս կըսպասէ Տ. Գալֆիայեանի յաւաջագոյն ընծայած բազմաթիւ գաղղիերէն գրքերուն հայերէն թարգմանութեանց շարքը։ Ի վերջ բանիս յաւելցընենք թէ, Տ. Ամբրոսիոս Գալֆիայեան գաղղիական լեզուն ու գրականութիւնն Արևելքի մէջ ճանչցընելոյ պատուաւոր պաշտօնին մէջ իրեն զործակից ըրած է իւր եղբայրը Տ. Խորէն Գալֆիայեան. որմէ աւելի լաւ օգնական մը չէր կրնար գտնել։ Տ. Խորէն Գալֆիայեան որ Թէոդոսիա կըմնայէ, Հայաստանի այժմեան ազգային քերթողն է. Հայաստանի մէջ բազմաթիւ ազգային երգեր հրատարակեց, որ Հայոց մէջ մեծ արձագանք տուին. նա Տ. Ամբրոսիոս Գալֆիայեանին գիտաւորութեան լաւ պատասխանելոյ համար Փարիզի մէջ ալ Լամարթինի Դաշնակաց հայերէն ոտանաւոր թարգմանութիւնը հրատարակեց։ Վերջապէս, կիմանամք թէ Տ. Ամբրոսիոս Գալֆիայեան իւր Արևելքի հայրենակցաց համար առաջին Նափոլէոնի պատմութիւնը պիտի հրատարակէ հայերէն լեզուաւ։ Գաղղիա կըշահի միշտ իւր դրականութիւնն ու պատմութիւնն օրէ օր աւելի լաւ ճանչցուելովը։

Ֆրանչիսք ՏԻԻԳՐՕ։

Զմիւռնիոյ Ծաղիկն մէջ կըկարդանք հետևեալը։

Ազգ Տաճկաստանի գաւառական Հայոց։

«Հալէպ 21 Յունուար, 1862։

»Սիրելի Ազգիս յառաջադիմութեան և փառացը փափաքող երևելի ուսումնական և ճշմարիտ Հայրենասիրաց շջչափած հարկաւորութեանց գլխաւորները, եթէ չեմ խաբուիր, սա երկուքը կրնան համարուիլ։ Առաջին. հասարակաց հասկընալու լեզուով ճառ, յօդուած, գիրք և տետրակներու հրատարակութիւնը ու ամեն գնով և դիւրութեամբ ընդհանուրին ձեռքը հասցնել։ Երկրորդ. ազգերնիս օտարին զրպարտութիւններէն պաշտպանելու և, որ կարևորն է, Եւրոպականաց լիովին տեղեկացնելու փութով՝ Գաղղիարէն հանրածանաչ լեզուաւ հանդէս կամ օրագրի մը հաստատութիւնը։ Բայց այս վերջին միջոցը մեր կարողութենէ վեր բան մը ըլլալն կըսեմք՝ որ ճարտար և բանիրուն լեզուագէտը հոգան, և առաջինն նկատմամբ կըսեմք՝ թէ արդարև հասարակաց հասկանալի ոճով խօսելու են երևելի գրագէտները և հանդիսաւորները. բայց որչափ դժուարին է ասիկայ՝ քանի որ սիրելի ազգերնիս, որքան որ տարբեր գաւառներու մէջ է, այնքան ալ ոճի և լեզուի տարբերութեան մէջ կըգտնուի։ Հրաշքի կարօտ է անշուշտ այնպիսի ոճ մի յարմարցընելը՝ որ Գաղատացւոց ոճով գրուած գրութիւն մը Ակնցւոց և Տիգրանակերտցւոց կամ Կեսարացւոց ևայլն հասկանալի ըլլայ։ Բայց որովհետև բաղդը հեղինակութիւնը ու մտքերը Տաճկաստանի մէջ Պօլսեցւոց, Զմիւռնացւոց և Վանեցւոց բաժին է հաներ, (մոռնալու չէ տուր Երուսաղէմայ վանուց մտքերն ալ, որ թէև մինչև հիմա խեղճ և անօգուտ վիճակի մէջ է, բայց պիտոր դայ օր մը որ ազգին օգուտին նուիրուի) շատ դիւրին է Պօլսեցի և Զմիւռնացի ազնիւ դրագիտաց գաւառականաց ամենախառն ոճովը գրել՝ և անոնց ներքին սէտքերը ու զգայմունքները հեռուէն զննել և դարման մատուցանել, թէև դեռ իրենց ի լոյս ընծայած ազգօգուտ գրութիւնները գաւառականաց ձեռքը հասցնելու համար ցոյց տրուած դիւրութիւններուն դիմելու անդամ վստահութիւն չունին։

»Հապա ուր թողունք աս սաստիկ դժուարութիւնը (ինչպէս որ արդէն ալ ըսեր եմք) որ գաւառական Հայրս ըստ մեծի մասին ամենաջնջին փոշ մը ծախելով գիրք մը, հանդէս մը, լրագիր մը առնելու սովորութիւնը չունիմք և սովորութիւն ունեցողքս ալ Կոստանդնուպօլսէն կամ Զմիւռնիայէն բերելու դժուարութիւնը կըկրենք ի վնաս տարածման ընթերցանութեան, որուն արդիւնքը պիտոր ըլլայ մտաց մշակութիւնը։

»Բանի որ ասոնք ճշմարիտ արգելքներ են, և մենք ալ համոզուած ենք թէ կարօտ եմք մտաց մշակութեան և լուսաւորութեան, ուրիշ հնարք մի չեմ ճանաչեր մեր աս պէտքերը լեցընելու և մեզ երջանիկ ընելու, այլ իրաւանչիր գաւառական ազգային, որ քիչ շատ գրիչ գործածելու յարմարութիւն ունի, նոյն գաւառին Հայոց խմանալի լեզուովը և ոճովը ազգայնոց առաջիկայ պէտքերուն վրայօր թերթեր գրէ և տետրակ տպել տալով հասարակութեան նուիրելու հոգ ընէ։ Ազգայինը ոչ միայն այս պիտի ընէ, այլ նաև տպագրութեան և թղթատարի ծախքերը քսակէն տալով և իւր երկասիրութիւնը ձրի ցրուելով ազատչելու է որ կարդան, (վասն զի ամեն տեսակ նորութիւն դժուարաւ հասարակութենէ կընդունուի. դժբաղդաբար նոր է մեր մէջ գիրք ևայլն կարդալն ալ) և պէտք չէ յուսահատի այն ազգայինը՝ երբ իր գովելի ընթացքին մէջ իրեն ընդդիմութիւններ և արգելքներ պատահին հիւանդոտ մտքերէ կամ շահախնդիր և նախատաչարեալ անձերէ։ Միայն թո՛ղ ջանայ որ իր բովանդակ գրութիւնները՝ կրօնքի, քաղաքական կառավարութեան և բարոյական սկզբանց չհղպչի, և ոչ ալ փառասիրութեան անուանդ ըլլայ։ Այս միջոցով միայն կըյուսացուի Տաճկաստանու գաւառական ազգայնոց լուսաւորութեանը օգնել և քիչ շատ գրականութեան ճաշակը առնելու նպաստել։ Անկէ վերջը կոկսի հմուտ գրագիտաց գրուածքները փնտռուիլ և գրամի չվնայուիլ։

»Հիմակ միայն կըմնայ ըսել թէ գաւառական Հայոց համար գրչի տէրերուն մեծագոյն մասը բազմաղիմի ըզբաղմանց ենթակայ է, ու շատերն ալ չքաւորք։ Ասիկայ ճշմարիտ արգելք մը կրնար համարուիլ, եթէ կամքը ամէն արգելքներու յաղթող չըլլար և քանի մը քիչը մէկ շատ մը չընէր։

»Զբաղմունք։ — Զբաղմանց մէջ հանդստութեան որոշած ժամանակնուս խիստ փոքրիկ մասը կրնայ իրրև զբօսանք ազգային աշխատանաց նուիրուիլ։ Ո՞հ, կա՞յ մի արդեօք յօդուտ ազգին աշխատելու ժամանակն աւելի քաղցր և դրօսալի ժամանակ մը։

»Զքաղաքութիւն։ — Ո՞հ, անիծեալը դու, արդարև անատանելի ես և ամենայն բարեաց խափանիչ. բայց պէտք է գիտնալ որ ասոր ալ ընկերութիւնն է. ուր թողունք որ ընելիքնիս անանկ մեծագումար ծախք մըն ալ չէ։ Ասուած չընէ եթէ արբեցողներէն ըլլայինք, հնարՕ էր արդեօք չքաւորութիւնը մեզ խմելեաց ծածքէն արդիլել, անտարակոյս ոչ։ Ամենակարևոր պարտքերնիս անգամ մէկդի թողլով մեր մալի սովորութիւնը ի գործ դնելու հոգ պիտի տանինք, ինչպէս որ կրնան մալի սխտացեալք։ Ուրեմն ազգասիրութիւնը թող մեզի բարոյական ախտ մը համարուի. ան ատենը ամենայն դիւրութեամբ կը ծախեմք մեր անձնական հազար ու մէկ ծախքերուն խիստ փոքրիկ մասը, և եթէ հնար ըլլայ որ այս ազդաչահ ձեռնարկութիւնը օգնելու մասնաւոր ընկերութիւններ ալ հաստատուին, ան ատենը աւելի դիւրութեամբ կըկարողանամք նպաստակնուս հասնիլ։

»Ահա այս և ասոնց նմանը մտածելով և յառաջ քան զայս հրատարակուած յօդուածով, նամակով և մասնաւոր գրութեամբ առաջարկած ազգաչահ խնդիրներուս սակ լուութեամբ մը պատասխանուիլը տեսնելով՝ միաքս ինկաւ տասկայ առածը. «Երկու ձեռքը մէկ գլուխի համար է։» Փոքրկութիւնս որ գաւառական Հայոց յանինը կըսեպուիմ՝ բաւական զրպարտնքէս հանդստութեանս համար որոշած քիչ մը ժամանակս, որ հասարակաբար, նարտ, թուղթ ևայլն խաղալով զուարճանալու, ծուխ քաշելու և առողջութեան պահանջածէն աւելի քնանալու կըգործածուի, չըսեմք բամբասանքի. ևս և ամենաչինչ գումար մը փոքր, որ սովորաբար անօգուտ զուարճութեանց կըվատնուի, այս ամենակարևոր գործին նուիրելով և ազգիս պատկառելի ուսումնական դրագէտներէն հրապարակաւ խոնարհաբար ներողութիւն խնդրելով, առաջարկութեանս առաջին փորձը ընել կը համարձակիմ։

»Եւ որովհետև ազգիս առաջին կարօտութիւնը, ամէն բարոյականի հիմը և, որ առաւելն է, անրիծ կրօնքնուս մեզմէ պահանջածը սէր է, նախ և առաջ աս ամենակարևոր ազգասիրութիւնը գաւառական սիրելի ազգիս լուսթեանը սրտին մէջ արձարձելը պատշաճ համարելով՝ հասկանալի ու շօշափելի ոճով մը երևելի հեղինակաց գրուածներէն մասնաւոր քաղուած մը ընելով, և իմ կողմանէ ալ ներկայ պարագայից և գաւառիս ազգայնոց կացութեանը յարմար տեսածներս աւելցընելով, Միքէրինի սկզբ վերնագրով և շուկայական տասկարարրուս լեզուով տետրակ մը գրեցի, և տպագրական ծախքին վրայ իւրաքանչիւր գաւառ գրկուելու տետրակներուն ճանապարհի ծախքերն ալ բոլորովին քսակէս վճարելու սիրով յանձնառու ըլլալով՝ հազար օրինակ տպագրել տպագրեցի ու միտնդամայն հնար եղածին չափ ալ հասարակութեան գրաբնթեռնի ըլլալուն հոգ տարուիլը ազնիւ տպագրատէրն խնդրեցի. որ աս տետրակները տպուելով մեր ձեռքը հասնելուն անմիջապէս պիտոր գրկուին, Կ. Պոլիս Ընթերցասիրաց Ընկերութեան Ընթերցարանը, Զմիւռնիայ Վասպուրական Թանգարանը, և Էնկիսրի, Սմասիա, Թոխատ, Սեբաստ, Բայսերի, Էրզրում, Էրզինկայ, Տիարբէքիր, Սէն, Զիմուշկեզեկ, Սարկեր, Խարբերդ, Փասու, Մալաթիայ, Մարաշ, Ուրֆայ, Տիարպէքիր, Մուսուլ, Պաղտատ, Սեերեկ, Անթեպ, Պեսնի, Բեղես, Անթերիզ, Պելան, Աստանա, և հոս Հալէպ մայր եկեղեցիներուն մոմածախներուն։ Ուզողը այս տեղերէն ձրիապէս կըստանայ, և այս քաղաքներէն ի զատ ուրիշ գաւառականք եթէ ուզեն կրնան պահանջել մեր գրատունէն, որ ի Հալէպ։

»Տետրակնուս լեզուին մասին դուցէ դիս մեղադրող դտնուի։ Դեռ Հայերէն չգրելուս և հետևաբար ալ ուսմամբ բանեցնելուս համար իրաւունք ունին ասանք։ Բայց գիտնալով որ հայերէն լեզուով որ և իցէ ոճ անկարելի է ընդհանուր հասարակութեան հասկանալի

ըլլալ, ստիպուեցայ ոչ թէ մինակ Տաճկական աղնիւ լեզուին մէջ ոգէտ ըսուելէն չխորշիլ, այլ՝ որ դժուարագոյն է՝ մայրենի անդրանիկ լեզուիս ազգիս ընդհանուրին հասկանալի ըլլալուն նախանձայուզութիւնս անդամ զոհելու պարտաւորեցայ, որ այս իմ դուշնաքեայ աշխատութիւնս հասարակութեան արդիւնաւոր ըլլայ։ Ճշմարիտ երջանիկ պիտոր համարուէի եթէ ընդունելութիւն գտնէր այն՝ ազգիս բարեսէր հասարակութենէն և հետեւարար դաւառական գրչատէր ազգայնոց ալ աղուաղ օրինակ մը համարուէր որով Հայրենասէր ճշմարիտ հեղինակներն ալ այս հոգէն ազատած ըլլալով՝ ժամանակ ունենան իրենց մտաց տաղանդները գործածելու՝ մեր մտքէն և կարողութենէն վեր եղած բաներու մէջ։

» Ի վերջոյ կը բաղձանք ալ որ մեր այս ազգը դաւառական ազգայնոց ամենեցուն խմանալի ընելու համար ազգային արժանայարգ լրագրապետք և հանդիսաւորաբար որոնց որ հանդ թուի, բարեհաճին ամրողջ օրինակելով հրատարակել՝ և մենք երախտապարտութեան շնորհակալութիւններս կանխիկ կընուիրեմք։

» Աղնիւ և սիրելի ազգիս յառաջադիմութեանը միշտ բաղձացող, Յ. Ս. Քիւրբճեանօֆ։ »

Այս աղնիւ և ազգասիրական խորհուրդն երկնող ու գործադրողը ազգին մէկ անհատն է, շատ միջոցներէ զերծ. բայց իւր հանգուցեան ժամանակէն և աւելորդ ծախքերէն ինքզինքը պրկելով՝ այնպիսի գործի մը ձեռք զարկեր է, որ ազգն իրաւամբ աւելի կոստակէր մեր այլ և այլ վանքերէն, ուր խումբ խումբ վարդապետներ ունիմք՝ որ Մեծապատիւ և ազգասէր Պ. Քիւրբճեանօֆին շատ աւելի միջոց ու դիւրութիւն ունին այդպիսի ձեռնարկութեանց։ Օրինակի համար Երուսաղէմի և Արմաշու վանքերն յիշենք, որք ուրիշներէն աւելի ծանօթ են մեզ, և որոց առաջինը տպարան ունի, երկրորդն ալ ուզէ նէ դիւրութեամբ կրնայ ունենալ։ Տպագրութեան ծախքին համար մեծ հոգ մի չունին. վասն զի թէ՛ վանքը կրնայ հոգալ, և թէ հոն ուխտի գացող առատաձեռն անձինքներէ նպաստ կրնան ընդունիլ, քանի որ մեր ազգն ազգօգուտ ինչպէս նաև բարեպաշտական գործերու նպաստելէ բնաւ ետ չկենար։ Գրելու կարողութիւն ունեցող վարդապետներ, Պ. Քիւրբճեանօֆին հանող և դերազանցող ալ գտնուելուն քաջ տեղեակ եմք։ Ընդհանուր Հայոց (և ոչ թէ միայն Տաճկաստանի) ցրուելոյ դիւրութիւնն ալ ունին առանց ճանապարհի ծախքերը քսակնուն տալոյ, քանզի անոնցմէ ամեն տարի ուխտի գացողք պակաս չեն։ Իսկ ժամանակ, կարծեմք թէ Պ. Քիւրբճեանօֆին շատ աւելի ունին։ Ուստի կրնայ իրենց միայն աշխատիլ և ունեցած այս ամեն միջոցներնին արդիւնաւոր ընելով ազգին երկրորդ լուսաւորիչներ կանգնիլ։ Երանի՜ թէ այս յիշատակութիւններս և Պ. Քիւրբճեանօֆին գովելի օրինակն իրենց խրախոյս մի ազգէր։

Լրագրոյս նախընթաց թուոյն մէջ կարդացին Արդոյ Ընթերցողք Նոր Եօրքի մեր Արդոյ թղթակցին գրածը, ուր յիշատակութիւն եղած էր ազգին ինքնակոչ երևելեաց ըրած հաստատութիւններուն, անոնց ձեռամբ ժողովրդեան իրաւանց ոտնակոխ ընելոյն և կրած զրկանաց վերայ։ Ահա այսօր ալ կը հրատարակենք ինքնակոչ երևելոյ մը մէկ նոր հաստատութիւնը, որ այս շաբթու տեղեկացանք, և կարծես թէ Նոր Եօրքի մեր Արդոյ թղթակցին պատմածներուն նոր հաստատութիւն մի տալոյ համար վրայ կը հասնի։ Սակայն այս անգամ գտնէ սա միսիթարութիւնն ունիմք, թէ վեհանձն և ազգասէր ուրիշ երևելի մը հաստատութեան կրած զրկանացը վերայ սրտմտելով՝ բոլորով զօրութեամբ կաշխատի, և խեղճերը կազատէ միւսին ճիրաններէն։ Ահաւասիկ եղելութիւնը, որ ակամաւեն արժանահաւատ անձէ մը կը հաղորդուի մեզ։

Յայտնի է թէ Օսմանեան կառավարութիւնը տէրութեան նահանգները թղթադրամ խրկելով՝ ոսկիի հետ փոխել կուտայ։ Հալէպու նահանգն ալ խրկուելով, այն տեղի բաշխումը յանձնարարական խառն ժողով մը կը տնօրինէ։ Քիկիա գիւղաքաղաքի Պ. Կ. Պայրաքեան անուն երևելին իրը ազգապետ այն յանձնաժողովոյն մէջ դտնուելով՝ ի գիտէ ինչ վատասիրութեամբ և որուն հանդ երևելոյ բաղձանօք՝ 11,000 ղուռուշ կը յատկացընէ Քիլիսի հայոց փոխոխելիք գումարը, որ անոնց կարողութենէն վեր է։ Բայց ի սմանէ՝ այդ գումարին հաւաքումն ու փոխանակութիւնն ալ իր վրայ առնելով կը յարձակի ժողովրդեան վերայ և կոկսի ամենայն անիրաւութեամբ գործել. այսինքն, իր վատ ընթացիկ հակառակ եղող անձէ մը՝ որ քսան դրամի կարօտ է, հարիւր դահեկան պահանջել խստիւ, իսկ հարուստ՝ բայց իր չարութեանցը գործակից անձինքներէ և ոչ քսան վազ։

Հետևաբար՝ այս անիրաւութիւնը յանկարծ մեծ խռովութիւն կը յարուցանէ տեղւոյն ազգայնոցը մէջ, և իսկոյն բոլորոց դրեր կը խրկուին Պոլիս ազգային Ժողովոյն, բայց արդիւնք մը չտեսնուիր։ Այն ատեն ճշմարիտ ազգասէր Պ. Դաւիթ Սիլահեան Յարգի Անձը տեսնելով և գուշակելով թէ այն խռովութեան վախճանը խիստ դէշ պիտի լինի, կը խորհի տեղական իշխանութեան դիմել և արիարար բողոքել՝ ըսելով թէ, « Եթէ ժողովրդեան քաղաքական կառավարութիւնը Պ. Պայրամեանին յանձնուած է, կուզեմք աչօք տեսնել Արդարակորով կառավարութեան հրովարտակը, իսկ եթէ ձեզի հաճոյ ընդարձակ բարբովը (մէշրէպի կէնիշ) կարօղացաւ այդ իշխանութիւնը գրաւել, մենք կը բողոքենք. զի ժողովուրդն անոր խաղալիկ չէ և չկրնար լինել։ »

Այս իրաւացի բողոքին դէմ տեղական իշխանութիւնը կը պատասխանէ թէ, ամենևին հաւանութիւն չունի եղած անիրաւութեան, այլ Պ. Պայրամեանն ազգապետ ճանաչած լինելով՝ ժողովրդեան վստահութեանն արժանի կարծեր է զանի, և անոր համար այդ գործն անոր յանձներ է, յուսալով թէ արդարութեամբ պիտի կատարէ զայն։ — « Շատ լաւ, կը պատասխանէ Պ. Սիլահեան, քանի որ ձեր կամքն արդարութիւն ընել է, և պահանջուածը տուրք մը չէ, այլ փոխանակութիւն մը, ուրեմն ինչ՞ հարկ կայ անբաւականներէն ալ պահանջել ու զանոնք նեղել. և թէպետ ես Աստուծով կարող եմ այս 11,000 դահեկանը քսակէս տալ, բայց կարծիք չտալոյ համար թէ այսպիսի գործերով ձեր առջին յարգ ստանալ և Պ. Պայրամեանին տեղն անցնել կուզեմ, որն որ երևակայած անգամ չունիմ, ուստի կառաջարկեմ անոր (Պ. Պայրամեանին), որ եթէ կամի՝ երկուքս ընկերութեամբ վճարենք այդ գումարը, և ժողովուրդը նեղութենէ ազատենք։ »

Տեղական իշխանութիւնն այս առաջարկութեան ըսելիք չունէր, և Պ. Պայրամեան՝ որ հոն ներկայ էր, չէ կրցեր մերժել առաջարկութիւնը, քանզի իրեն նուաստութիւն կը լինէր, ուստի կամայ ակամայ կը հաւանի և իսկոյն երկուքն ի միասին կը վճարեն իրենց քսակէն 11,000 ղուռուշի թղթադրամին արժողութեամբ մետաղեայ դրամ։

Ահա այն ազգասէր անձին շնորհիւն այս կերպով կազատի հարստահարութենէ մը՝ այն դիտութենէ՝ ուսումնէ՝ ուսուցիչէ՝ խրատիչէ և մայրենի լեզուէ զուրկ՝ յետին խեղճութեան մէջ ապրող ժողովուրդը, որուն նիւթական եկեղեցւոյն մեծագումար փողը, որ իրենց ճակատին քրտինքովն յառաջ եկած է, Պ. Պայրամեանը պարարտացընելոյ կը ծառայէ։

Այս տեղեկութիւնը մեզի կը ցուցանէ, թէ ազգը ո՞րչափ կարօտ է տեղեկութեան, և թէ անոր հաստատութեամբն ու ամեն կողմ գործադրութեամբն ի՞նչպէս թշուառութիւններ պիտի պակսին հարստահարեալ ժողովրդոյ վրայէն։

« Բաղդոյ անունով ձեռագիր հանդէս մը սկսաւ հրատարակուիլ Մեսրովպեան դպրոցի աշակերտներէն Պ. Նշան Միրզա Վանանդեցւոյ, Պ. Արմենակ Կոստանդեանի և Պ. Սարգիս Մարգարեանի աշխատասիրութեամբ։ Այս երեք անձերը հազիւ թէ 10-12 տարեկան են, բայց իրենց հրատարակած նիւթերը և բնաբանները ստուգիւ չափահաս անձերու խորհուրդներու կը նմանին և մեր ուրախութիւնը և զարմանքը կը շարժեն, մանաւանդ երբ տեսանք անոր մէջ Սեր Հայրենեաց անունով յօդուած մի շարունակելի, Սահմանադրութեան վրայ երգ ևայլն, որք ապառնի ժամանակի մը երջանկաբեր նշոյլներն են։

» Կը բաղձալերենք դիրենք, կը գովենք իրենց եռանդը և աշխոյժը, և անտարակոյս եմք որ եթէ խոհեմութեամբ և ուշադրութեամբ կատարեն իրենց պարտքը (զորս ցաւ է մեզ չկատարուած տեսնել նաև չափահասներու մէջ) իրենց ձեռնարկը և աշխատութիւնը կը ծաղկուի և այս անդամ պզտիկները մեծերու օրինակ կընծայեն սոյն ասպարիզին մէջ։ Իրենց այս աշխատասիրութիւնը ուսումնասէրներէ լաւ ընդունելութիւն գտած է, ինչպէս և իրենց ժողոված ստորագրութենէ յայտնի է. որ վեցամսեայ գինը երկու հինգնոց ըլլալով՝ նոյն ժողովուած ստակը տալու համար պիտի դործածեն ժամանակէ մը ետը։ Երկրորդ սերունդը մեծ ակնկալութիւններ կ'երևցնէ մեր ազգին համար։ »

(Միսրիան Զմիւռնիոյ)։

ԱԶԳ

Կը խնդրենք մեր Արդոյ Բաժանորդներէն, որոց որ ստորագրութեան ժամանակը լրացած է, բարեհաճին հնար եղածին չափ շուտով նորոգել, եթէ իրենց լրագիր խրկուիլն ընդհատիլը չեն ուզեր։

Հարկ կը համարինք վերջին անդամ ծանուցանել թէ, իրենց ստորագրութեան գինը կանխիկ չվճարողներուն այսուհետև լրագիր խրկելը պիտի դադրեցընենք. քանզի ոմանց կողմէն զանազան անկարգութիւններ պատահելով, լրագրոյս յառաջադիմութեանը խափանարար պատճառներ յառաջ եկան, որոց վերջ տալ մեր առաջին ջանքն եղած է. վասնորոյ կրկին կաղաչենք մեր Արդոյ Բաժանորդները՝ որ ներողամիտ լինին այս ընթացքը բռնելնուս, զի ի հարկէ ստիպեալ կընենք։

Նաև անցեալ և առաջին տարուընկ լրագրոյս պարտք ունեցող Յարգելոյ ալ պատիւ ունիմք ծանուցանելոյ, որ եթէ մինչև մէկ ամիս հատուցանել չբարեհաճին, պիտի պարտաւորինք իրենց անունները լրագրոյս միջոցաւ անպատճառ հրատարակել։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Տառեան Մեծապատիւ Պօղոս Պէյի Աղնուափայլ որդի Մկրտիչ Էֆէնտին, որ շատ տարիներէ ի վեր ուսմանց կրպարապի ի մայրաքաղաքս, և որ Օսմանեան դեսպանատան արքանեակ է, այս օրերս Փարիզու Ազգային Ընկերութեան անդամ ընտրեցաւ։

— Յարգոյ Պ. Օ. Քեաթիպեան Անդրիանուպօլսեցի, որ վեց տարի ու կէսէ ի վեր աստ բժշկութիւն կուսանէր, իւր ուսմունքն արժանաւոր կերպիւ կատարելով և փառաւոր վկայական ստանալով՝ ամսոյս 12-ին մեկնեցաւ մայրաքաղաքէս իւր հայրենիքը վերադառնալոյ համար։

Իւր յառաջադէմ դասընկերները կը հաստատեն թէ նա խիստ ճարտար ու երևելի բժիշկ մը եղած է, որ ոչ սակաւ պատիւ է ազգին՝ և օգուտ իւր հայրենեաց։

— Անցեալ տարի Սիամի թագաւորին կողմէն դեսպաններու Փարիզ դալը կը յիշեն մերազնեայք. այս տարի ալ Ճարոնէն կը ժամանէ դեսպանութիւն մի, որ Գաղղիոյ այցելութիւն ընելէն յետոյ Անդղիս պիտի երթայ։ Եղիպտոսէն հեռագրաբար մի կը ծանուցանէ թէ, Ճարոնի դեսպաններն ամսոյս 25-ին Աղեքսանդրիայէն մեկնեցան անդղիական Հիմալայա շոգենաւով՝ դէպ ի Մարսիլիա։

— Աղեքսանդրիայէն ամսոյս 17 թուով դրուած նամակները կը հաստատեն թէ Եգիպտոսի Փոխարքայն յառաջիկայ մայիսի վերջերը Եւրոպա պիտի ճանապարհորդէ։

Սուէզի պարանոցին բացման հսկայադործ աշխատութիւնն ամենասաստիկ ջանքով յառաջ կերթայ։

— Սմերիդայի Միացեալ Նահանգաց կառավարութեան նախագահ Պ. Լինդօլնի առաջարկութեան համեմատ՝ խորհրդարանն ընդունեց դերեայ ազատութիւնը, անոնց տէրերուն հատուցումի մի ընելով։

— Մեր ժամանակին ամենէն երևելի քաղաքաղիտաց մէկը՝ Ռուսիոյ նախարդ արտաքին գործոց պաշտօնեայ Դէսպրօտ կոմն ամսոյս 24-ին մեռեր է ի Սանկտ Փեթերսբուրգ ի հասակի 82 ամաց։ Նա ծնած էր 1780-ին։

— Օսմանեան տէրութեան Անդղիայէն ըրած փոխառութիւնը մեծ յաջողութեամբ կատարդրուի։ Մինչև երեկ՝ ստորագրութիւնները 24 միլիոն լիրա սթէրլինն անցեր էին, որ խնդրուած գումարին եռապատիկն ըսել է։

— Մարուսի Հանրաբարի Ռուսիոյ անուն օգտակար օրդիրը Ճոպդի հետ խիստին կատանամք միշտ, և անոր յառաջադիմութիւնը տեսնելով կուրախանամք։ Այս դեղեցիկ լրագիրն սկսած է պատկերազարդ հրատարակիլ, և այսուհետև հասարակութիւն առանց Ճոպդի ալ կրնայ ստանալ զանի՝ տարեկան 3 ռուբ. արծ. և վեցամսեայ 1 ռ. 50 կ. արծ. կանխիկ վճարելով։

Ռուսիոյ Հանրաբարին օգտակար ծառայութիւններ կը մատուցանէ մանաւանդ ռուսերէնակ Հայոց. վասնորոյ կը նորհաւորենք նորա Արժանապատիւ Հեղինակը, և կը յայտնենք լրագրիս մէկ օրինակ իրենց ընծայելոյ փափաքելիս։

— Ժամանակիս ազատամիտ դրագիտաց մին՝ Պ. Է. Փէլթան՝ երկրին օրինաց դէմ յանցանքի համար բանտի և տուգանաց դատապարտուելով՝ սրտաւոր ընկալաւ ինքզինքը Անթ-Փէլաժի բանտը յանձնել, որ Փարիզու ամենէն թեթև բանտն է, և հոն կեցած են հեղինակ Շոմիէրեան՝ Լամենէ ու Պէլանժէ։

Իրեն վճարելիք տուգանքն 2,000 ֆրանք էր. որ թէ-

պետ անանուն կողմէ մը իրեն խրկուեցաւ, բայց ինք չընդունելով՝ ուզեց որ իր գրքատունը ծախուի և անկէ յառաջ եկած գումարովը վճարուի տուգանքը։ Ուստի ամսոյս 19ին գրքատունն աճուրդի դրուեցաւ, որ հետևեալ հետաքրքրական կերպիւը կատարեցաւ։

Տեսչութեան պաշտօնեայ մը իր մարդիկներովը ներկայ էր հոն։ Իսկ Փարիզու ազատամիտ ուսանողները խոհեմութեամբ իրենց կողմանէ միայն երկու հոգի խրկեր էին հոն՝ հետևողներն դրամով։

Աճուրդին վերակացուն նախ կիկերոն մը ծախու դրաւ օրթը Ֆռանքի։

— Հինգ հարիւր Ֆռանք, գոչեց ուսանողներէն մին։

— Հազար, ըսաւ շուտ մը միւսը։

Գնահատը փութայ տալ զանի հազար Ֆռանք տուողին։ Յետոյ ուրիշ գիրք մը հանեց երեք Ֆռանքի, որ նախընթացին պէս 500 և ապա 1000 Ֆռանքի ելնելով, գնուեցաւ միւս ուսանողէն։

Այն ատեն տեսչութեան գործակալը ոտքի ելնելով ըսաւ թէ, որովհետև այս վճարումն նպատակը երկու հազար Ֆռանքի տուգանք մը հատուցանել է, և այս գումարն ալ ահա ելաւ, ուստի վճարումը կը վերջանայ։

— Անգղիոյ պարտիզպանութեան թագաւորական Ընկերութիւնը յառաջիկայ հոկտեմբեր 8ին Բէնսինկթոնի պարտիզին մէջ ծաղիկնոց՝ պտղոց՝ բուսոց և արմատոց աշխարհահանդէս մը պիտի բանայ։

— Լօնտոնցին լուր կուտան թէ Անգղիոյ ամենէն հին օրագիրներէն մին՝ Մորնինկ-Քրոնիքը՝ ինն տուն և երկու տարի հրատարակուելէն յետոյ դադարեցաւ։

— Գերմանիոյ Տէթմոլ քաղաքը հայր մի իւր 16 տարեկան որդին մորթեր, և, զլուխը մարմնէն բաժանելէն յետոյ փայտակուտի մը վերայ զետեղեր է այրելոյ դիտմամբ։ Այն միջոցին դրացիները վրայ հասնելով՝ երբ իր ըրածին մեկնութիւն կը պահանջեն, կը պատասխանէ թէ Հայր Աբրահամին պէս իր միակ որդին Աստուծոյ մատաղ ընել կուզէ։

— Գաղղիոյ Լինէվիլ քաղաքը մօտերս հետևեալ դէպքը պատահեր է, զոր երկրին օրագիրներէն մին այսպէս կը պատմէ։

« Պատուաւոր ընտանիքէ Պ. Գ.... անձը տեղախօսելական կեանք մը կը վարէր։ Բաւական հարստութեան տէր, երկու կամ երեք օր շարունակ տեղ մը չէր կրնար բնակիլ։ Այսեն ատեն կը տեսնուէր յիշեալ քաղաքին մէջ, միշտ խարտեշագոյն փանրալօն մը և դեղին բամբակ մի հագած ու գլուխը հովուի գլխարկ մը դրած։ Հոն սենեակ մի կը վարձէր, և մէկ քանի օր կենալէն յետոյ կամերևութանար։

» Քանի մի շաբաթ յառաջ Գ.... նորէն երևցաւ մի և նոյն հագուստով և սովորութեամբ, որուն քիչ ուշադրութիւն եղաւ։ Բայց աւտու մը զրացիներն յայտնելով թէ շատ օրէ ի վեր նա սենեկէն դուրս եղած չէ, ամենուն ուշադրութիւնը գրգռեցաւ, և դացին սենեկին դրան ականջ դրին, որ բնաւ ձայն չէր լսուեր ներսէն։ Ուստի դուռը բացին և Գ.... իր անկողնոյն վերայ փռուած գտան, միայն իր փանրալօնը հագած։

» Հարկ եղած քննութիւններն ընելով՝ վրան թղթեր գտնուեցան, որոյմէ յայտնուեցաւ թէ 160 էն 170,000 Ֆռանքի հարստութեան տէր է. բայց քովն ամենևին պատրաստ դրամ չկար։ Ըստ օրինաց պէտք եղած կարգադրութիւններն ընելէն յետոյ, բանկրոնակն հաղորդելով մեռելը թաղեցին, և սկսան կտակը քննել. որ ամենէն ոնակնկալ կամք կը յայտնէր։ Գ.... իւր բոլոր հարստութիւնն իր ընտրած մէկ անձին կտակ ըրեր էր, բայց այն պայմանաւ որ նոյն անձն անպատճառ երթայ Փիլինէյի ամենէն անապատ կողմն ամսականոց մի կանդնէ և մէջը բնակի։ Իսկ կտակառուն ամենևին չուզեց կտակն ընդունիլ. ուստի ամենէն մերձ ազգականներուն յանձնուեցաւ, որոնք շատ կրտարակուսին ընելիքնուն վերայ։

» Այս անցից միջոցին, մեռելոյն նօտարը տեղեկութիւն տուաւ թէ, նա իւր մեռնելէն մէկ քանի օր յառաջ 14,000 Ֆռանքի թղթադրամ ընդունած էր։ Եւ որովհետև այդ դրամն երևան չէր եկած, ուստի ժառանգները զայն գտնել ուզեցին, և շատ փնտռել ու չգտնելնոյն յետոյ՝ զժբաղդ Գ...ը թաղող կինը յիշեցոյց թէ հագուստները չհանած թաղուեցաւ մեռելը։ Այն ատեն պատուէր տրուեցաւ որ գերեզմանը բանան։ Մեռեալն արդէն տասն և մէկ շաբաթուան լինելով՝ այս գործողութիւնը սոսկալի եղաւ, և ներկայ գտնուողներէն երկուքը կէս խեղդուած ինկան. բայց և այնպէս սոսկը փնտռելը կը շարունակէին. և ահա տեսչութեան գործակալը ձեռքի գաւազանաւը Գ...ին բանկոնակը մէկ դի ընելով՝ չքննուած դրան մի ցոյց տուաւ։ Այնոր մէջ նայելով 14 հատ 1000 Ֆռանքնոց թղթադրամ գտան, միայն մէկ հատը փոքր ինչ աւրուած։»

— Գաղղիոյ հեռագրական գծից վերատեսչութիւնն անցեալները 1861 թուականին մէջ ընդունած արդիւնքն հրատարակեց։ 1861 յունուարի առաջին օրը հեռագրական գծից չափն էր 21,070 քիլոմէթր, և որք 364 կայարան ունէին։ Այս կայարանները նոյն տարուան մէջ 741,552 փութագիր առաքեցին. որոյմէ եղած արդիւնքը 4,144,082 Ֆռանքի կը հասնի։ Այս հաշիւն զուրս են Գաղղիայէն Փիէմոնթէ եղած դիծերը։

Միայն Փարիզ 184,134 փութագիր խրկած է։ Փարիզէն ետքը ամենէն աւելի բանած քաղաքներն են Մարսիլիա՝ Լիյոն՝ Պուռսա՝ Հավր՝ Նանթ՝ Լիլ՝ Ռուան և այլն։ Գաղղիոյ ամենէն շատ փութագիր խրկած երկիրներն են, Բրիտանական կղզիները (34,112), Իտալիա, Սպանիա, Պելճիքա, Զուիցերիա, Փրուսիա, Գերմանական դաշնակցութեան ազատ քաղաքները (Համպուրգ՝ Պրէմ և Լիուպէք), Ռուսիա, Աւստրիա, Հոլանտա և այլն։ Այս փութագրոց առաջին նիթն է արուեստն ընդհանրապէս (251,545), յետոյ ընտանեկան և անձնական գործերը (210,734), պօրսայի գործերը (41,131), ընդհանուր վճռականութիւնը (42,601), օրագրոց լուրեր (10,300), և այլն։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՄԱՐՍԻԼԻԱ, 27 ՄԱՐՏ 1862։

Մետաքս և Բոժոժ։

Այս շաբաթս առուտուրն անցեալ շաբաթուընէ նուազ եղաւ։ Լիյոնի գործարանները, որոց գործերը նուազած են, քիչ ապրանք ուզեցին Մարսիլիացին, ուր արդէն գտնուածն ալ շատ չմնալով՝ խիստ սակաւ առևտուր եղաւ։ Վերջին օրուանս մէջ 4 պալեայ Աղեքսանդրիի Փիլաթիւռ ծախուեցաւ, Ֆ. 72։ 9 հակ Պարսկաստանի Ռաշտի Բ. Ֆ. 46, էսբ. հարիւրին 10։ 2000 քիլոկրամ Իզմիրի բոժոժ, Ֆ. 24. և 2000 քիլ. Էտիրնէի, Ֆ. 22։

Բամբակ։

Առուտուրն այս շաբաթս շարունակ նուազ եղաւ։ Միայն 250 պալեայի չափ Ժիումէլ ծախուեցաւ նախընթաց գիներով. և 150 պալ. Արևելքի կարճ-մետաքս ըստուածէն, որուն 30 պալեան Զմիւռնիոյ, 50 քիլոկրամը Ֆ. 108էն 110, և 123 պալեան Աստրեստանի, բաւական զգալի իջած գինով մը, այսինքն Ֆ. 87 50էն 92 50։

Բուրդ։

Շաբաթն անցաւ բաւական հանդարտութեամբ. վասն զի անցեալ տարուան բերքէն դալը դադրեցաւ, և նորն ալ դեռ չկար։ Իսկ եղած քանի մը վաճառումներն տոչի գիներուն վերայ առանց նշանաւոր փոփոխութեան եղան։ Այհատիկ անոնց ցանկը.

60 պալ. Պարսկաստանի չլուացած բուրդ, 50 քիլոկրամը Ֆ. 77 50էն 80։ 50 պալ. Պաղատատի լուացած ճերմակ, Ֆ. 145. և 44 պալ. Բասիլի, Ֆ. 90էն 81 25։

Իսկ ժամանածն է, 45 պալ. Ճէզայիրէն, 170 պալ. Պոլիսէն, 13 պալ. Օռանէն, և 10 պալ. Աստրեստանէն։

Զտած Շաբար (Ռաֆինէ)։

Դուրս տարուելոյ ապրանքն այս շաբաթս ալ քիչ չնորհք գտաւ։ Բայց փիրածէն քանի մը վաճառում եղաւ 2էն 300,000 քիլոկրամի չափ, 50 քիլոկրամը Ֆ. 41. և նոյնին մանր տակառովն 800 տակառ, Ֆ. 41 50էն 42։ Գլուխ շաբարը գրեթէ փնտռող չկար, և հազիւ մէկ երկու վաճառում եղաւ։

Այհատիկ այս աւուր գիները.

Գլուխ մերկ՝ 50 քիլոկրամը Ֆ. 42էն 42 50։ — Թղթով 7 0/0, Ֆ. 41 50էն 42։ — Գլուխ 3 քիլոկրամնոց Ֆ. 45։ — Ծեծած, Ֆ. 45։ — Փխրած (թօզ) տակառով, Ֆ. 41էն 41 50։ — Նոյնը մանր տակառներով, Ֆ. 41 50էն 42։ — Ներքին սպառման համար՝ գլուխ մերկ առաջին տեսակը՝ Ֆ. 62էն 62 50։

Սարմ (խանվէ)։

Այս ապրանքին առուտուրն իր ազէկ կացութիւնը կը պահէ. իսկ առուտուրի նուազութեան պատճառը վաճառողաց բարձր գին պահանջելն էր միայն։

Ընտիր սարմէն 1800 տոպրակ և 150 տակառ Փոսթոռիկո ծախուեցաւ, 50 քիլոկրամը Ֆ. 105, 4 ամիս վճարման պայմանաժամով. և նաւու բեռ մը Սան-Եակօ, Ֆ. 100, և 4 ամիս. երկուքն ալ ապայանձնելի։

Ռիոյէն մէկ երկու հազար տոպրակ ծախուեցաւ, Ֆռ. 75էն 80, ըստ տեսակին։

Այս շաբաթս միայն Հայիթիէն ժամանեց 3400 տոպրակ։

Յորեն։

Թէ Գաղղիոյ նահանգներէն և թէ դուրսերէն առնուած անյաջող լուրերուն պատճառաւ Մարսիլիոյ յորենները վաճառուելոյ դժուարութիւն կրեցին։ Սակայն տեղական սպառման համար միշտ յորեն ուղղիլը չպակսելով և մերձակայ նահանգներէն ալ ուղղուելով, ապրանաց գիները նշանաւոր զիջում մը չիրեցին։ Շաբաթը կը վերջանայ բաւական մեծ հանդարտութեամբ մը, և այսօր 3000 էրթօլիդրի չափ այլ և այլ ապրանքէ զանազան մանր վաճառումներէն ի զատ՝ միայն 3840 էրթ. Պանթիլյորեն ծախուեցաւ, շառաժն 120-124 կրոշ, Ֆ. 37 50։ Աճուրդին մէջ 2080 էրթ. Ինէզի կարծր յորեն ծախուեցաւ, 127-123 կրոշ, Ֆ. 27 75, ներքին սպառման համար։

Այս շաբաթս ժամանած ապրանքը թէև չափազանց դումարի չհասնիր, բայց անցեալ շաբաթուանէն աւելի է, այսինքն 87,707 էրթօլիդր։

Յուղային Հունտեր։

Այս շաբաթս առուտուրի ազէկ շարունակութիւն մի կար, և գործարանատերք՝ վաճառոցոյ գիջում ընելէն առիթը լաւ գործածեցին։

Արևելքի սուսամներն ըստ տեսակին և յանձնելոյ ժամանակին համեմատ, 100 քիլոկրամը Ֆ. 62ի, 61ի և 58ի ծախուեցան էսքոնթով և պայմանաժամով. որմէ բոլոր վճառուածը քանի մը հազար կենդինարի կը հասնի։

Հնդկաստանի սուսամները, որ ամսոյս սկիզբները Ֆ. 55 75 կարժէին, 54 50ի ծախուեցան՝ 10,000 կենդինարի չափ՝ մինչև յուլիս ամսոյ մէջ յանձնելի։

Եգիպտոսի բամբակի հունտ ծախուեցաւ 4500 կենդինար, Ֆ. 17 75։

Բոլոր շատոդագրեալ յօդուածոց համար. Ա. Մուրատեան։

Մարտ 12էն մինչև 26 Յանկարտանէն Մարսիլիոյ նաւահանգիստը մտած գլխաւոր ապրանքներն ու տեսակներն ու քանակութիւնը։

Մետաքս	պալեայ	763
Բոժոժ (քօզա)	պալեայ	67
Մետաքսի կոտրտուք (Ֆոխզն)	պալեայ	235
Խոշոր մետաքս (պուռ)	պալեայ	2
Շերամի հունտ	սնտուկ	5
Բամբակ	պալեայ	1764
Բուրդ	պալեայ	498
Մորթ	պալեայ	532
Շուշմայ (սուսամ)	տոպրակ	1588
Մեղրամոմ (պալմումու)	տոպրակ	12
Խահվէ	տոպրակ	2
Տզրուկ (սիւլիկ)	տակառ	24
Խէժ Արաբիոյ (զամքարաղը)	տոպրակ	17
Գինի Կիպրոսի	տակառ	4
Պղինձ (պաքրը) 05 մաս (փառթի) և	պալեայ	51
Եղջիւր (պուցնուղ) 2 մաս և	տոպրակ	100
Հոտաւէտ իւղ	սնտուկ	0
Ծխախոտ (թիւթիւն)	պալեայ	0
Սպունգ (սիւնկէր)	պալեայ	8
Գխտոր (մաղը)	տոպրակ	643
Բամբակի հունտ	արտէպ	0
Տորոն (բէօք պոյա)	պալեայ	0
Թորթ (մահմուտիյէ)	տոպրակ	0
Զամիչ	տոպրակ	892
Աֆիոն	սնտուկ	14
Սինամէքի	տոպրակ	0
Քթանի հունտ	տոպրակ	234
Շաքար	տոպրակ	0
Խոշխաշի հունտ	տոպրակ	3
Խունկ	տակառ	0
Մատուտակ (միյան քէօքիս)	պալեայ	34
Ճէհրի	տոպրակ	2
Ծովափրխուր (եէնի լիւլէ մատէնի)	սնտուկ	0
Թուզ	տոպրակ	0
Թեղի	տոպրակ	0
Այծու մազ	պալեայ	4
Տոսոխ (չիմէրի)	հատ	4067
Ոսպ (մէրճիմէդ)	տոպրակ	0
Նուշ (պատէմ)	տոպրակ	5
Անիսոն	տոպրակ	4
Կնքեալ ծրար դրամոց		0

Խմբագիր-Տնօրէն. Ա. ՄՈՒՐԱՏԵԱՆ.

Հանդերձատու. ՎԻԳԹՈՐ ԼԱՆԿԼՕԱ.

Ի Գրատպարանի Կ. Վ. Շանոլաբիան։

Paris.— Imprimé par E. THUNOT et Ce, rue Racine, 26.